**Համայնքային մշակութային կյանքին ԿԴԻՀ երեխաների ընգրկվածության ապահովում:**

**Համայնքային բարեկարգման աշխատանք:** Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 1 համայնքային աշխատանք Գավառ քաղաքի Արծվաքար թաղամասում գտնվող Սուրբ Հովհաննես մատուռի հարակից տարածքում: Համայնքային բարեկարգման աշխատքններին ներգրավվել են ընդհանուր թվով եղել **73 մասնակից՝ 61 շահառու երեխա, 11 ծնող, 1 համայնքի անդամ:** Աշխատանքները իրականացվել են 4 հետևյալ փուլով.

**1-ին փուլ՝ հաջողակ պատմությունների ներկայացում և քարտեզագրում:** ՓԻ կենտրոնի շահառու երեխաները իրականացրել են Գավառ համայնքի քարտեզագրում և դիդակտիկ պաստառների միջոցով ներկայացրել են կենտրոնի գործունեության ընթացքում կենտրոնի սաների, համայնքի բնակիչների և Գավառի համայնքապետարանի հետ համագործակցությամբ բարեկարգված 7 տարածքները: Այս տարածքներում իրականացված բարեկարգման աշխատանքները ներկայացվել են կենտրոնի մյուս սաներին, ծնողներին և համայնքի բնակիչներին կենտրոնի 7 **սաների կողմից, որից 4 աղջիկ, 3 տղա:**

**2-րդ փուլ՝ Աշխատանքի պլանավորում:** ՓԻ կենտրոնի շահառու երեխաների կողմից տեղի է ունեցել 1 համայնքային տարածքի բարեկարգման ծրագիր՝ վեր են հանվել խնդիրները, առաջարկվել են լուծման քայլեր: Բարեկարգման համար դիտարկվել է Գավառ քաղաքի Արծվաքար թաղամասում գտնվող Սուրբ Հովհաննես մատուռի հարակից տարածքը: Հանդիպմանը մասնակցել են են գտնվել **17 շահառու երեխա՝ 9 աղջիկ, 8 տղա:**

**3-րդ փուլ՝ Գործողությունների իրականացում:** Պրակտիկ աշխատանքները տեղի են ունեցել 3-րդ փուլի ընթացքում, արդյունքում տեղի է ունեցել տարածքի մաքրման և բարեկարգման աշխատանքներ, կանաչապատ տարածքի մշակում ու հարթեցում, տաղավարների և աղբամանների մշակում ու ներկում: Գավառի համայնքապետարանի կողմից իրականացվել է աղբահանման աշխտանքներ: Աշխատանքներին մասնակցել են **73 հոգի՝ 34 շահառու երեխա /21 աղջիկ, 13 տղա/, 10 ծնող, 1 համայնքի անդամ:**

Աշխատանքները իրականացվել են հետևյալ փուլերով՝

- Տարածքի մաքրում
- Խոտին հնձում
- Աղբի տեսակավորում և կուտակում
- Երկաթի մշակում
- Աղբարկղերի ներկում
- Տաղավարի ներկում

**4-րդ փուլ՝ Ուխտագնացության կազմակերպում:** Համայնքային բարեկարգման տարածքում կազմակերպվել է արշավ և ուխտագնացություն դեպի Սբ. Հովհաննես մատուռ: Կենտրոնի առաջնորդների խմբից կազմված շահառուների կողմից տեղի է ունեցել մատուռի պատմության ներկայացում, որի արդյունքում հասակակից երեխաները ընդհանուր տեղեկություններ են ստացել տարածքի վերաբերյալ, այնուհետև երեխաները հետաքրքիր և հաճելի ժամանակ են անցկացրել իրենց կողմից բարեկարգված տարածքում: Արշավին մասնակցել են **43 երեխա, որից 28 աղջիկ, 15 տղա և, 10 ծնող:**

**Հայկական Կարիտասի Գավառի Փոքրիկ Իշխան սոցիալական կենտրոնի հիմնադրման 14-ամյա տարեդարձին նվիրված հանդիսավոր միջոցառում:** Միջոցառումը համախմբել էր կենտրոնի 57 /33 աղջիկ, 24 տղա/ սաներին և նրանց 14 ծնողներին, 14 շրջանավարտներին, համայնքից հրավիրված 20 երեխաների ու երիտասարդների:

Տարեդարձին մասանակից սաները և անձնակազմի անդամները խմբերով ներկայացրեցին հետևալ գործողությունները.

**Մասնակիցների գրանցում և դիմավորում:** Մասնակիցների գրանցմանը հաջորդեց խմբերի բաժանումը: Յուրաքանչյուր մասնակցի տրվեց այցեքարտ նշված խումբ այցելության համար: